

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ
ՀԱԿՈՒ ՕՇԱԿԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒՄ *

ՄԱՐԻ ՌՈԶ ԱԲՈՒՍԵՖՅԱՆ (ԱՄՆ)

Շուտով լրանալու է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Մինչ այժմ մենք ավելի շատ ուսումնասիրել ենք Ցեղասպանության թողած ազդեցությունն այդ արհավիրքը ապրած գրական այն սերունդի վրա, որը ծանոթ է «Անապատի սերունդ» անվանումով, այդ ազդեցության վերարտադրումը նրանց գործերում, դեռ սպասելով Ցեղասպանությունն իր ամբողջ տարողությամբ ներկայացնող ստեղծագործությունների: Բայց չէ՞ որ Հայոց ցեղասպանությունը միանգամից՝ 1915 թ. չսկսվեց ու գործադրվեց, այլ ծրագրված, աստիճանաբար իրագործվելով իր վերջնակետը գտավ հենց այդ թվին:

Հիմնվելով արևմտահայության ծրագրված, աստիճանական ոչնչացման, դարերով նրանց ստեղծած բարքերի, կենցաղի, մշակույթի, պատմության կորուստ-ոչնչացման փաստերի վրա, պիտի նշել, որ Հայոց ցեղասպանությունը, իր ակունքից սկսած, արտացոլված է արևմտահայ գրականության մեջ՝ հանձինս Հակոբ Օշականի 1920–1934 թթ. ստեղծագործությունների: Ծնվելով նախաեղեռնյա, եղեռնի սկզբնավորման և դրա աստիճանական գործադրման միջավայրում, ապրելով եղեռնյա՝ վերջնական ջարդերի ու ետ եղեռնյա ժամանակաշրջաններում՝ նա ամբողջովին յուրացրել էր արևմտահայության դժոխային կյանքը թուրքահային ոչնչացնող տիրապետության տակ և ավելի ուշ արդեն աշխարհի հայության ճանապարհներին սփռված, որը և փոխադրեց գրականություն: Ինքն անձամբ, ապրելով եղեռնի վերջնակետի սարսափազդու իրավիճակը, ծրագրել էր այդ վերջնակետը՝ հայության զանգվածային կոտորածներն ու տեղահանություն-աքսորը, դարձնել իր վեպերի գլուխգործոց՝ «Մնացորդացը»-ի վերջաբանը՝ «Դժոխք» վերնագրով: Ոչ միայն երևակայությունից, մարդկային ըմբռնումից վեր արհավիրք էր ապրել արևմտահայը, ոչ միայն բնաջնջվել, ոչնչացվել, արմատախիլ էր եղել, կտրվել իր ծիներին սնուցող ակունքներից, այլև այս ամենից հետո կենդանի մնացողներն իրենց մեջ էին փնտրում այդ ոչնչացման պատճառները: Օշականը, որպես մեծ մտածող, իր պարտքն էր համարում այդ ամենը գրականությամբ արտահայտելու: Հարցն այն էր, ինչպե՞ս գրականություն փոխադրեր այդ բոլորը: Ըստ իրեն՝ Գիրին ուժը պետք է հավասարեր դեպքին մեծության: Իսկ դեպքին մեծությունը՝ Եղեռնը, իր բառերով՝ մեծատառով Աղետը, հայրենի հողի վրա կատարված Ցեղասպանությունը, սովորական բառերի

* 2013 թ. հոկտեմբերի 17–19-ին Երևանում անցկացված Հայագիտական երկրորդ համաժողովում կարդացված զեկուցման ընդարձակ տարբերակը:

սահմանումից դուրս երևույթ էր: Օջականից 84 տարի անց, այս նույն միտքը ավելի սուր կերպով արտահայտել է եղեռնի վերապրողներից Նարգիզ Ժամկոչյանի հիշողությունները գրառող գիտնական Վիթալի Յանկոն: «Այդ Աղետը կարիք ունի մի նոր լեզվի, գուցե և առանց բառերի», – *ասել է նա: Ուրեմն զարմանալի չէ, որ Օջականը՝ ամենաբարդ երևույթներն անգամ այնքան բնականորեն բառերի վերածողը, չէր կարողանում գտնել այդ գիրին ուժը, այն բառապաշարը, որն ամբողջ տարողությամբ վերարտադրեր, պատկերեր միլիոնավոր ժողովրդի տարագրություն, տարածքների բռնագրավում, նրան ոչնչացնելու համար օգտագործված զարհուրելի եղեռնագործություն:*

Ճակատագիրը թույլ չտվեց Օջականին իրագործելու իր մեծ երազանքը, նա մահացավ ավելի վաղ, քան կգրեր իր մեծածավալ վեպը, սակայն մինչ այդ նա արդեն հասցրել էր իր ուշ շրջանի պատմվածքներում և իր գլխավոր վեպերում արտացոլել հայության դեմ գործված Յեդասպանությունը սկզբից, իր ակունքից և դրա գործադրման միջոցները:

Հիշեցնեմ, որ Միջազգային իրավական օրենքով Յեդասպանություն է համարվում՝ 1. Մի ժողովրդի, մարդկային մի խմբի, ծրագրված սպանություն-ոչնչացումը: 2. Մարմնական և հոգեկան վնաս հասցնելը: 3. Դիտավորյալ ծրագրումով նրանց տարածքների և ունեցվածքի բռնագրավումը: 4. Բռնի ուժով դավանափոխությունը... Եղեռնի վերջնակետից առաջ Թուրքիան արդեն իրագործում էր այս ամենը՝ հայերի տարածքներին մեկընդմիջ տիրանալու համար, այսինքն՝ Եղեռնը արդեն սկսված էր նախքան 1915 թ: Օջականն իր գլխավոր վեպերում արտացոլում էր այդ ժամանակաշրջանը՝ Եղեռնի սկիզբը և օգտագործված միջոցները: Հիշենք նաև, որ Աղետը, Յեդասպանությունն արդեն տեղի էր ունեցել, երբ Օջականը 1920 թ. գրում էր իր պատմվածքները և 1928–1934 թթ. վեպերը:

Բանտերից, աքսորից, անապատներից վերադարձել էին հրաշքով սակավ փրկվածները ու գրառել իրենց ապրած զարհուրանքը: Օջականը տեղյակ էր Եղեռնի բոլոր մանրամասներին, ինքն էլ դեռ այդ սարսափի ազդեցության տակ էր՝ «Աղետեն վերջ տակավին քառորդ դար պուտ մը չեն աղոտած»¹, բնականաբար, ինչ էլ գրեր, իր էության, իր մտքի, իր խոսքերով՝ «ինչպես սաղմին վրա», իր ենթագիտակցության մեջ արմատացած այդ անջնջելի աղետն էր ներկայացնելու: Չէ՞ որ ըստ հոգեբանների, մարդկային ենթագիտակցության մեջ դաջվում են նրանց ապրած զարհուրելի փորձությունները և անգիտակցորեն վերարտադրվում իրենց գործերում: Պատահական չէ, որ նա ձեռնամուխ եղավ թուրքին հայ գրականության մեջ ներկայացնելուն: Դրանով հայի ուշադրությունը նա կենտրոնացրեց իր երկրին, իր հոգուն, իր մտածողությանը տիրացած ու իրեն բնաջնջած ցեղի, թուրք հասկացության վրա, պարզաբանելով, թէ՛ ինչն է գործադրվեց եղեռնը, ի՞նչն էր հային բնաջնջելու թուրքերի նպատակը և ինչպե՞ս իրագործվեց այն:

Եղեռնի մասին առաջին անգամ հանդիպում ենք 1920 թ. Պոլսո «Ճակատամարտ» օրաթերթում պարբերաբար հրատարակված նրա պատմվածաշա-

¹ Հ. Օջական. Համապատկեր, հ. 10, Լիբանան, 1982, էջ 86:

րում: Ուշագրավ խորագրով պատմվածաշարը՝ «Կայսերական Հաղթերգություն», ընդգրկում է հինգ փոքրիկ պատմվածք, ուր պատկերվում է հայության ապրած մեծագույն ողբերգությունից՝ Եղեռնից դրվագներ, այդ եղեռնագործության հոգեբանական հետևանքներն ու ազդեցությունը կենդանի մնացողների վրա:

Մեր գրականության մեջ առաջին անգամ Օշականը այս պատմվածաշարում խոսեց Ցեղասպանության կազմակերպման մեջ Գերմանիայի մասնակցության մասին: Պատմվածաշարի առաջաբանում նա մեղադրում է Գերմանիային, մասնավորապես, Վիլհելմ II կայսրին Թուրքիայի հետ մեր Ցեղասպանությունը կազմակերպելու համար: Արդեն շնորհագրկված կայսրին հեղինակը հիշեցնում է փառքի օրերին նրա գործած ամենամեծ ոճիրը՝ Հայոց ցեղասպանությանը մասնակից դառնալը, այն «անպարագրելի, մեր մտքերուն սահմաններեն դուրս մնացող ոճիրը»², համատարած աքսորն ու անպաշտպան հայության զազանաբար հոշոտումը, որն իրագործվել է գերմանացի հսկիչների անմիջական ու անտարբեր հսկողությամբ: Թեև այդ ոճիրները նա համարում է միայն «ավագին հատիկ մը կայսրին ետին թողած արյան պատմության մեջ»³: Կայսրից բացի՝ նա դատապարտում է նաև գերմանացի ժողովրդին, նրա ցուցաբերած անտարբեր լռության համար՝ «քու վրայեդ իջնալու համար քու ցեղիդ, որ հանդուրժեց-չըսելու համար փառաբանեց – ոճիրներուն ամենեն անորակելին»⁴:

Պատմվածաշարի՝ «Արծիվները» և «Վրդոված Խղճմտանք»-ում ամայացած հայրենի երկրի ողբերգությունն է: Գիշատիչ արծիվները, որոնք այլաբանորեն թուրք մարդակեր խուժանն են, բզկտում, ոչնչացնում են դարերով հայ ազգի հավաքագրած հարստությունները՝ ինչքերը, իղձերը, երազները, գիշատիչի արյունակեր բնագոյներով ոչնչացնելով ամեն ինչ, տիրաբար տարածվում են հայկական դարավոր հողերի վրա: Իսկ լեռների մեջ ծվարած փոքրիկ հայ գյուղի բնակիչները հավատարիմ իրենց հավատքին լուռումունջ մորթվում են:

Ընդամենը մի քանի էջանոց «Տանտանը» պատմվածքում մեր առջև կենդանանում է Եղեռնից անմիջական մի տեսարան: Հինգ տարեկան մանուկը մարդկային սպանդի խուճապահար փախուստի հոսանքում կորցնում է մորը, տեսնում է կապկպված ձեռքերով հոր բռնի հեռացումը, քույրերի առնանգումը, եղբայրների մահը ճամփաներում ձգված և միայնակ արյան ու կոտորածի միջով խելակորույս քայլում է մահվան քարավանով: Ետո հիշում է դիակների մեջ սարսափահար իր լացը, երբ մի թուրք ծերունի փրկում է նրան ու բերում Պոլիս: Թուրքի տանը, անգիտակցորեն թրքացած, իր համար ասելի ու խորթ այդ միջավայրում, միայնակ ու լուռ իր մանկական հիշողություններով է ապրում: Ամբողջ օրը նա մտքով իրենց գյուղում է, իրենց տանը, իր եղբայրների ու քույրերի հետ խաղալիս: Թեև փրկված է, գլխին մազի փոխարեն մի մեծ սպի ունի ու մի կոտորած տիկնիկ ձեռքին, երջանիկ չէ: Նա ասելությամբ է կատարում ծառայի իր պարտականությունը՝ տան երեխային հոգ տանելը, իր մեջքին

² Հ. Օշական. Կայսերական Հաղթերգություն, Բեյրութ, 1983, էջ 10:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

դնելով պատեցնելը: Ինքն ընդամենը հինգ տարեկան է, ամբողջ օրը լուռ է, մտքով անվերջ իրենց տանը, իսկ այդ երեխան իր ճշացող լացով խանգարում է իրեն սիրելի հիշատակների վայելքը ապրելու: Անգամներ մտածում է նրա կոկորդից պոկել ձայնի լեզվակը, որ լռեցնե նրան հավիտյան: Օշականն այստեղ խորը ստեղծագործողից դառնում է հոգեբան-հետազոտող՝ հաստատելով այսօրվա նյարդագետների այն տեսությունը, որ վաղ մանկության մեջ հոգեկան զարհուրելի ցնցումներ ապրածների ենթագիտակցության մեջ դաջվում են այդ տեսարանները, որոնց «մասունք պատկերներ» են անվանում («iconic images») և որոնք հաճախակի գլուխ են բարձրացնում՝ արթնացնելով իրենց ապրած ցնցումը: Հիշեցնեմ, որ Օշականն առաջինն էր, որ այս հարցին՝ Եղեռնի թողած հոգեբանական ազդեցությանը, անդրադարձել է Աղետից անմիջապես հետո, որը ավելի ուշ հոգեբանների հետազոտության առանձին ճյուղ պիտի դառնար:

Եվ մանուկն իր մեջքից ասելությամբ նետում է մարդասպանների այդ լացող շառավղին ու տարվում իր մեջ արթնացող եղբոր՝ պճիկ Թումասի հուշով, որը «չորցավ ճամփուն տաբերեն ու ձգվեցավ ծառի մը շուքին»⁵: Եվ մի օր դարպասի դուռը բաց գտնելով՝ դուրս է գալիս փողոց, ինքնամոռաց քայլելու պահին լսում է հայկական եկեղեցու զանգերի ձայնը, որն իր մեջ արթնացնում է իր կորցրած կյանքը: Այդ ձայնին հետևելով՝ հասնում է եկեղեցի, կարողանում է միայն ասել, որ հայ է, և տանտանի, մանկական լեզվով՝ «զանգակի», ձայնն է իրեն բերել այնտեղ:

Այս փոքրիկ, հոգեբանական պատմվածքով Օշականը ոչ միայն Եղեռնից հատված էր ներկայացնում, այլ նաև փորձում էր այդ զանգակի ձայնով ետ հավաքագրել հայության հավատասփոխ եղած, փրկված հատվածին:

«Վրեժը» պատմվածքում նույնպես կոտորածի պատկերն է: Յուրայինների դիակների միջից հանկարծ ճեղքված գլխով մի վիրավոր մանուկ՝ միայնակ, հազիվ ոտքի կանգնելով, դեռ ուշքի չեկած, իր ուժը չվերագտած՝ խեղդում է թուրք մանկանը: Այլաբանորեն գրված այս պատմվածքում՝ ոտքի կանգնող մանուկը խորհրդանշում էր Եղեռնից անմիջապես հետո, անօգնական ու միայնակ, աշխարհից մերժված հայության հաշվեհարդարը Յեղասպանության գլխավոր պատասխանատուներից: Պատմվածաշարն ամփոփող «Կայսերական հաղթերություն» պատմվածքում թուրքերի գործած Յեղասպանության կոծկումն ու ուրացումն է, որը ներկայացվում է գալի ու գառների այլաբանական փոխհարաբերությամբ: Եվ հեղինակի հարցումն այն է, թե «աշխարհ պիտի հավատա » նրանց այդ սուտին:

Եղեռնը ազդարարող, եղեռնը կազմակերպողներին աստիճանաբար բացահայտող և անուղղակիորեն Յեղասպանությունն արտացոլող կատարյալ գործեր են «Հարյուր մեկ տարվան եռագրության» վեպերը՝ «Հաճի Մուրատ», «Հաճի Ապտուլլահ», «Սուլեյման էֆենտի», ինչպես նաև նրա գլուխգործոց՝ «Մնացորդացը»: Այս վեպերում ստեղծած իրավիճակների, անհատական կերպարների զարգացման, նրանց գործողության ու ճակա-

⁵ Նույն տեղում, էջ 37:

տագրի մեջ Օշականը տեղադրել է այնպիսի մանրամասներ, որոնք ընթերցողին անմիջապես փոխադրում են Եղեռնի միջավայրը:

«Հաճի Մուրատ» վեպի ամբողջ տարածքում հայերի դեմ տարվող հալածանքներում, հայության դեմ կատարված ոտնձգումներում պարզորեն նկատելի է հային սպառնացող մեծ արհավիրքը: Վեպի հերոսը՝ Հաճի Մուրատը, բնագործն զգում է իր ազգին սպառնացող վտանգը, «որ զարնելու էր արմատը իր ցեղին», և դրա համար նա ազատ է արձակում իր խմբի հայ ասպատակներին, որովհետև՝ «Ամեն տղա պետք է իր տունին: Սև օրերը ճամբա էին ինկած»⁶: Սև օրերը Եղեռնի ազդարարումն էր:

Վեպում՝ Մուրատի վրա գործադրված տանջանքներում, բանտի տանջարանում, Պրուսայի դիվանապետի գործողություններում, ամենուրեք Եղեռնի պատկերն է, որոնք մեզ անմիջականորեն կապում են Եղեռնին: Ահա Մուրատին տանջելու տեսարանից մի հատված՝ «Թները կոնակի վրա իրարու կարելով, մեկիկ-մեկիկ տաքցված աքցանով եղունգները ոտքեն ու ձեռքեն փրցուցին, փորին վրա մաղ-մաղ մոխիր փռեցին ու կոնակի ակոսին մեջ կարմրած շամփուր դարձուցին»⁷:

Մա դեռ մի դրվագ էր Եղեռնի ժամանակ հարյուր հազարավորների դեմ գործադրված նույնատիպ ու ավելի ահարկու չարչարանքներից: Այս նույնատիպ գազանության նկարագրությանը մենք հանդիպելու ենք և՛ Արմին Վեզների, ֆրանսիացի միսիոներ հայր Բենուայի, վերապրողներից Անտոնյանի, Շամտաճյանի, Թեոդիկի և այլոց գրառումներում: Իսկ քարայրում, թուրք դիվանապետի սառնասրտորեն գործադրած գազանային հաշվեհարդարը՝ Մուրատին խոշտանգելը, ակնթարթի մեջ կենդանացնում է ջարդի պատկերը՝ Տեր էլ - Չորի ճանապարհին քարայրներում ու ձորերում կիրարկված. «Դիվանապետը իր իսկ ձեռքովը թոցուց կեսը կապելային սեռական անդամին՝ զգույշ ու խոնարհ: Ու լրացնելու համար իր թրքությունը, փրցված կտորը թիամեց անոր կուղպ բերանեն ներս, դանակ սրցնելիք պողպատ սլաքով մը անոր ծնոտները փարչատելե ետքը»⁸:

Ի տարբերություն հասարակ ժողովրդի՝ լինելով ժամանակի առաջադեմ մտածող, հասկանալով Եղեռնի կազմակերպման նպատակը, վեպում Օշականը մինչև իսկ շոշափում է մեծ տերությունների քմահաճույքին հանձնված հայության ճակատագիրը ու քննադատում, մեղադրում է այն պետություններին, մասնավորապես, Եվրոպային, որոնք իրենց մասնակցությունն ունեցան և անտարբեր սառնությամբ հետևեցին կատարվող գազանություններին:

«Մեր աղետին ամենեն գարշ տրտմությունը բռնադատվեցավ մեզի քրիստոսանվեր այդ մարդերեն»⁹:

Մեր ջարդերում իրենց նշանակալից դերն ունեցած Մոլլաներին է Օշականը ներկայացնում «Հաճի Ապտուլլահ» վեպով, որոնք իրենց փաթթոցների իշխող հեղինակությամբ բորբոքեցին թուրք հասարակ, տգետ ամբոխի կրոնամոլ ատելությունը՝ սովորական դրացիից նրանց փոխակեր-

⁶ Հ. Օշական. Հաճի Մուրատ, Բեյրութ, 1973, էջ 371:

⁷ Նույն տեղում, էջ 404:

⁸ Նույն տեղում, էջ 397:

⁹ Նույն տեղում, էջ 406:

պելով վայրագ հայասպանների: Ընթերցողի աչքի առջև Մոլլայի ամենօրյա քարոզների տակ կերպարանափոխվող Ապտուլլահի կերպարում տեսնում ենք տարագրության ճանապարհներին մեր ժողովրդին հոշոտած բնածին ոճրագործներից մեկին: Ապտուլլահը և Մոլլան փայլուն ներկայացուցիչն են ոչ միայն իրենց ժողովրդի ու ժամանակաշրջանի, այլ նաև մեր ջարդերին մասնակցողների:

Հաջորդ՝ «Մուլեյման էֆենտի» վեպով Օշականն արդեն ամբողջացնում է ոչ միայն թուրքի հոգեբանությունն ու ցեղային ոճրագործ-բնածին հատկանիշները, այլ նաև այն սերնդի պատկերը, որոնք կազմակերպելու, գլխավորելու, իրագործելու էին մեր ջարդերը և որոնք «Երիտթուրք» անունն էին կրելու: Վեպի առանցքը թեև ի ծնե ոճրագործ, ճարպիկ մարդասպան, ավազակ քել (ճաղատ) Էտհեմի կյանքն է, բայց այն ներառում է նաև կայսրության իշխող համակարգի բոլոր խավերին ու հատկապես նրանց, ովքեր մասնավոր դեր էին խաղալու մեր ջարդերում՝ մոլլաները, կրոնապետները, կուսակալները, զինվորականները, օրենսդիր բոլոր մարմինները:

Էտհեմի նկուղներն ու գաղտնարան-տանջարանները հիշեցնում են այն բանտերն ու գնդանները, ուր տանջամահ էին անում հայ գործիչներին: Երիտասարդ կանանց ու աղջիկների լլկումները, բռնաբարումներն ու սպանությունները կրկնօրինակն ու հիշեցումն են Եղեռնի ժամանակ հայ կանանց ու աղջիկների վրա գործադրվող գազանությունների. «Բոլորովին համառները կապվեցան մարմար սյուներու, մերկացվեցան իրենց զգեստներեն, մսագործի դանակներով քրիկ-քրիկ ձգվեցան կիսավայրի մարդոց կիրքերուն»¹⁰: Իսկ Էտհեմի կողմից, իր կնոջ՝ Մերվինազ հանրմի լլկելու տեսարանն իրական պատկերն է 1915-ի հայ կանանց կրած լլկումների ու խոշտանգումների: Նույնատիպ ոճրագործների ռեալիզմներին հանձնված գազանություններով ոչնչացան հայության նշանավոր դեմքերը, ոչնչացավ միլիոնավոր ժողովուրդ:

«Մայրիներու շուքին տակ» Բ. Թասչանի հետ հարցազրույց-գրքում Օշականն ինքն է հաստատում, որ «Մնացորդացը» վեպին երկրորդ մասով նպատակ ունի տալ մեր վերջին աղետը՝ տարագրությունը, հետևելով շեն քաղաքի մը բնակչության, իր տունեն մինչև հեռավոր պողոտաները ավազներուն, կրելու համար ազգերու ամենեն մեծ ոճիրը իր մտքին՝ ինչպես սաղմին վրա: Երկրորդ հատորով կը սկսի արյան ճամբան»¹¹:

Մինչև օրս «Մնացորդացը» վեպը համարվում է կիսավարտ, քանի որ վիպասանը չկարողացավ իրագործել իր ծրագիրը՝ Եղեռնը ամբողջությամբ վերարտադրող վեպով ավարտել այն, սակայն իր իսկ հայտարարությամբ՝ «Վեպին գրեթե կեսը նվիրված պիտի ըլլա վերջին Եղեռնին»¹²: Եվ դա այդպես է, և վեպն իր գործողությամբ ամբողջացված, ավարտված է:

«Մնացորդացը» վեպը Յեղասպանությունն իր սկզբնավորումից, իր ա-կունքից արտացոլող մի մեծ համանվագ է, ուր տեսանելի է և՛ եղեռնի ողջ ծրագիրը, և՛ խելահեղ արագությամբ դրա իրագործումը: Տեսանելի է հա-

¹⁰ Հ. Օշական և Ն. Մուլեյման էֆենտի, Բեյրութ, 1985, էջ 113:

¹¹ Բ. Թասչան և Ն. Մայրիներու շուքին տակ, Բեյրութ, 1983, էջ 15:

¹² Նույն տեղում, էջ 19:

յերի քաղաքական տհասությունը, կուրությունը, մոտեցող արհավիրքը չտեսնելը, մինչև իսկ, երբ թուրքերն արդեն բացահայտ էին գործում: Տեսանելի է հայերի ավանդույթների անկման համար թուրքերի տարած հետևողական աշխատանքն և այդ անկումը, որը հայ ազգին տանում էր դեպի ոչնչացում: Տեսանելի է հայ հոգևորականության բարոյագրկմամբ՝ համայնքն ամբողջովին քայքայող թուրքերի՝ հաղթանակը: Տեսանելի է թուրքերի՝ իրենց մեծ ծրագրին՝ համահիսլամացմանը, հասնելու ակնդետ, համատ աշխատանքը:

Վեպի վերնագիրը՝ «Մնացորդացը», ինքնին մեզ կապում է Յեղասպանության հետ. ինչ որ փրկվեց, կենդանի մնաց այդ արհավիրքից, ազգի Մնացորդացը:

Վեպում օգտագործված մի շարք պատկերներ բացահայտորեն վերցված են Եղեռնից, ինչպիսին Սողոմի կախարդիչ երգն է բանտում: Դա անմիջականորեն Չանդրրի բանտում Կոմիտասի վերջին պատարագի կրկնօրինակումն է, որն Օշականը լսել էր նույն բանտից փրկված Բ. Պոզաճյանից, և այդ պատմությունից տպավորված՝ որոշել էր առանձին վեպ գրել դրա մասին, բայց մինչ այդ այն ներառել էր իր այս վեպում:

Ինչպես վերը նշվեց, Յեղասպանություն է նաև հասարակական-բարոյական հարաբերությունների բռնի ոչնչացումը, որը պատկերավոր արտահայտված է այս վեպում: Այսպես, Նալպանտենց գերդաստանի կյանքով տեսանելի է հայի, որպես ազգ իր հողի վրա կյանքը շարունակողի, ոչնչացումը, մեր բարքերի ու ավանդույթների փչացումը թուրքերի անմիջական աշխատանքով: Հայը միայն գլուխն իր ուսերին պահելու մտահոգությամբ տարված չի նկատում իր քայքայումը, իր բարոյագրկումը, չի հոտառում մոտեցող մեծ արհավիրքը: Ահա թե ինչու Եղեռնի հարվածը հանկարծակի ընդունելով՝ նա մեղավորներ է փնտրում իր ազգի մեջ և բնականորեն, առաջին թիրախը դառնում են թուրքին չհնազանդվողները՝ հեղափոխականները, համարձակ մտավորականները, մինչև իսկ մեր հեղափոխական կուսակցությունը: Սա, անշուշտ, բնական երևույթ էր դարերով օտարին հպատակվողների, գերության, հոգու շղթաներ կրողների, բնաջնջվողների հոգեբանության համար: Օշականը մինչև իսկ այդ հարցին է անդրադառնում՝ «Վատ ու անանուն բան է մեզ մեղադրել մեր մորթվելուն իբր դրդապատճառ» և այդ իսկ միտումով վեպում երկխոսություն է ստեղծում հեղափոխական Մաթիկ Մելիքխանյանցի և թուրք փաշայի միջև, ուր թուրքի բերանով բացահայտում է հայերի տարածքը ամեն գնով իրենցը դարձնելու նրանց վճռականությունը: «Մենք մեր հայրենիքին մեկ փշուրն ալ վճռած ենք չզիջել ուրիշին»¹³, – հայտարարում է փաշան: Սա է թուրքի համոզմունք-վերջնագիրը:

Իրենց այդ ծրագրին դեմ կանգնողներին թուրքերը հռչակում էին դավաճաններ, հեղափոխականներ, խռովարարներ, որպեսզի, դաժան հաշվեհարդար տեսնելով նրանց հետ, սանձեն հասարակ ժողովրդի արթնացումը, աստիճանաբար վերացնեն հայ քաջ երիտասարդներին: Հաճախ էլ ամենասովորական մարդիկ էին այդ պիտակով բանտ նետվում ու տանջանքների

¹³ Հ. Օշական. Մնացորդացը, Անթիլիաս, 1988, էջ 237:

ենթարկվում, ինչպես Սողոմոնը: Նման ստահող բանաձևումներով աշխարհի առաջ իրենց գործած Յեղասպանությունն արդարացնողներին ենք տեսնում երկխոսության մեջ, որը, անշուշտ, ավարտվում է Մաթիկի տանջամահությամբ և որին պարտադրաբար ականատես են դարձնում մեկ այլ հայ գոհի՝ Սողոմոնին: Այս հատվածն էլ կրկնությունն է Եղեռնի ժամանակ հարազատների աչքերի առաջ մոռոտաժ, կոտանքների ենթարկած մեր հեղափոխական գործիչների, մեր չընկճվող մտավորականության և միլիոնավոր հայության կրած չարչարանքների:

Յեղասպանությունը միայն ազգին ֆիզիկապես ոչնչացնելը չէ, այլ նաև ենթարկված տանջանքների՝ զազանային սպանության, բռնաբարության, նվաստացման, ճնշման հետևանքով ստացած հոգեկան և մտային վնասները, ազգային դիմագծի խեղաթուրումն է սովյալ ժողովրդի մեջ: Օջականը վեպում նկարագրում է նաև հայության մեջ այդ երևույթները՝ թուրքերի օգտին աշխատելը, նրանց կողմից հայը հային մատնելու համար նշանակված լրտեսները: Նրանցից մեկն էլ վեպում արվամուլ Նալպանտենց Մերոբն է, որը մատնում է Սողոմոնին կամ Կիլիկիայի հոգևոր առաջնորդը, որը մատնում է Մաթիկ Մելիքխանյանցին:

Վիպասանն անդրադառնում է մեր ամենացավոտ, նույնիսկ ինքներս մեզնից մինչև օրս թաքցրած մեկ այլ երևույթին՝ հավատափոխությանը: Դարեր շարունակ թուրքերի համար համիլյանությունը տարածելու ամենահեշտ միջոցը եղել է գոհին բռնի կամ մահվան ծուղակը ընկած՝ թրքացումը պարտադրելը, ինչպես վեպում Սողոմոնի թրքացումն է: Թուրքերի բազմամալը և տիրելը Արևելքում այդ բռնի հավատափոխության հետևանքն է, որը Օջականն էլ է հաստատում՝ «Թուրքերուն այժմու ավագները անդրկասպյան երկիրներեն չեկան: Հոս էին անոնք ի սկզբանե: Տաճկցան ու խավարեցան իրենց ժողովուրդեն»¹⁴: Մինչդեռ հայությունը, իր հավատին ամուր կառչած, արհամարհել, մերժել է ընդունել ոչ միայն հավատափոխներին, այլ նաև բռնաբարությունների հետևանքով կամ թուրքերի մերձեցումից ծնվածներին, որի ներկայացուցիչը վեպում Ղազել-Եղնիկն է, որոնց թուրքերն օգտագործել են հայի դեմ, ինչպես վեպում է, և որոնց մասին երբեք չենք խոսել, քննության հարց չենք դարձրել:

Վեպի վերջաբանը թուրքերի համար Եղեռնի հաղթանակի ցնծությունն է հիշեցնում, երբ Սողոմոն տաճկացումն ամբոխը տոնակատարությամբ է ընդունում: Մեռնում է հայը, ցնծում, հզորանում է տաճկացումը: Այստեղ ավարտվում է վեպը, ավարտվում է Եղեռնը:

Այսօր Օջականի այս գործերի շնորհիվ է, որ հայ գրականության մեջ, որպես բարձրագույն ստեղծագործություններ, ունենք մեր ժողովրդի ապրած ամենամեծ ողբերգության պատկերը և դրա թողած հոգեբանական ազդեցությունը մեզ վրա:

Ունենք այդ հարվածից ստացած մի շարք անլուծելի հարցեր, որոնք առաջին անգամ այս մեծ մտածողը բացահայտեց և մեր ուշադրությանը ներկայացրեց, բայց որը մինչև օրս անտարբերության ենք մատնել: Եղեռնը շուտով թևակոխելու է իր 100-ամյա տարելիցը, և մենք դեռ թերանում

¹⁴ Նույն տեղում, էջ 101:

ենք ձեռք մեկնել հայության հավատափոխ եղած հատվածին, միջև իսկ այն դեպքում, երբ բռնի հավատափոխներն, իրենք են արթնացել, իրենց լռությունը խզել ու մեր օգնությանն են սպասում: Երբեք քննության հարց չենք դարձնում բռնաբարությունների կամ թուրքերի մերձեցումից ծնվածների հարցը: Չէ՞ որ այն գոյություն ունի և կարևոր է մեր ազգի թվի ու մեր հետագա պահանջների համար: Ավելին. դեռ նույնիսկ պետական օրինագիծ չենք դարձնում մեր պահանջատիրության հարցը: Բայց չէ՞ որ յուրաքանչյուր այսպիսի գիտաժողովների միջոցով են պահպանվում, մասսայականանում, ազգային, գիտության, երկրի առաջընթացի, մարդկության առաջընթացի հարցերը: Հուսանք, որ այս գիտաժողովը ճանապարհ կհարթի մեր առջև ծառայած ու դեռ լուծման սպասող բազում հարցերի համար:

ОТРАЖЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН В ПРОИЗВЕДЕНИЯХ
АКОПА ОШАКАНА

МАРИ РОЗ АБУСЕФЯН (США)

Р е з ю м е

Крупный прозаик, драматург и историк Акоп Ошакан, будучи одним из передовых мыслителей своего времени, считал долгом отразить в своих произведениях (1920–1934 гг.) Геноцид армян 1915 года. Этой теме он посвятил трилогию «Сто и один год», состоящую из трех романов – «Гаджи Мурат», «Гаджи Абдулла», «Сулейман эфенди», и отдельный роман «Оставшиеся». В этих произведениях Ошакан всесторонне исследовал психологию турок, осуществивших Геноцид армян. В цикле рассказов «Имперская Песня победы» он представил отдельные отрывки из истории Геноцида, пригвоздив к позорному столбу главных преступников и ответственных лиц, совершивших резню беззащитного армянского народа, и требуя, чтобы турки понесли наказание за содеянное.

REFLECTION OF THE ARMENIAN GENOCIDE
IN HAGOP OSHAGAN'S WORKS

MARIE ROSE ABOUSEFIAN (USA)

S u m m a r y

Great novelist, playwright and historian Hagop Oshagan, being one of the advanced thinkers of his time considered his duty to reflect in his works (1920–1934) Armenian Genocide of 1915. He dedicated to this theme his trilogy “Hundred and One Year”, consisting of three novels “Haji Murad”, “Haji Abdullah” and “Suleyman Efendy” and separate novel “The Survivors”. In these works Oshagan thoroughly investigated the psychology of the Turks, carrying out Genocide of Armenians. In the series of stories “Emperor Triumph” he presented separate fragments from the history of Genocide, strictly blaming the main criminals and responsible persons, realizing the slaughter of helpless Armenians and demanding that the Turks were punished for their actions.

tions.